Գլուխ 30

Քերի՛ր հայ ազգայնականին, և տակից դուրս կգա սեկտանտը

«Դիմեք Նրանց, որ մեռածներին են կանչում և կախարդներին, որոնք շշնջում են ու մրթմրթում՝ չպե՞տք է ժողովուրդը երեսը դարձնի իր Աստծուն, որպեսզի ողջերը կարողանան լսել մեռածներից»:
ՄՈՐՄՈՆԻ ԳԻՐՔԸ, ՆԵՓԻ 18,19

«Ավագը՝ գլուխն է, իսկ կեղծ ուսուցիչ-մարգարեն՝ պոչը: Քանզի այս ժողովրդի առաջնորդները մոլորեցնում են Նրան, և Նրանց կողմից առաջնորդվողները ոչնչացված են»:
ՄՈՐՄՈՆԻ ԳԻՐՔԸ, ՆԵՓԻ 19,15-19,16

«Չէ՛, չէ՛, չե՛մ թողնի ես իմ եղնիկին»:
ՖԻՐԴՈՒՍԻ, «ԾԱՀՆԱՄԵ»

18-րդ դարի 40-ականներին Բավարիայի բնակչությունն անհանգստացած էր կուրֆյուրստության տարածքում մի կիսագաղտնի կազմակերպության գործունեությունից: Այդ կազմակերպությունը պղտորում էր մարդկանց, հատկապես երիտասարդության հոգին ու միտքը՝ ձևավորված կարգի դեմ ըմբոս-

տանալու, Աստծո ժխտման, ընտանիքի ինստիտուտի մերժման, սեփականության և ունեցվածքի բռնի ընդհանրացման և այլ գաղափարներով: Բավարիայի կուրֆյուրստի հրամանով կազմակերպությունը կասեցվեց, իսկ նրա հավաքատեղերից բռնագրավվեց մեծ քանակությամբ գրականություն, որ, ինչպես նշում են պաշտոնական փաստաթղթերը, պարունակում էր «հակապետական, հակաաստվածային, հակամարդկային գաղափարներ»: Հետաքննությունը կազմակերպության գաղափարական հիմքն ու գործունեության մեթոդաբանությունը գնահատեց իբրև հանցագործություն հասարակության դեմ, իսկ ցնցված կուրֆյուրստը բացատրական նամակով դիմեց Եվրոպայի միապետներին՝ նախազգուշացնելով մայրցամաքի ժողովուրդներին սպառնացող վտանգի մասին: Ցավոք, արքայական տները բավարար լրջություն չցուցաբերեցին և Բավարիայից արտաքսված սեկտանտները բացիլի նման տարածվեցին Եվրոպայով մեկ, ինչին հետևեցին 1789-ի հեղափոխությունը Ֆրանսիայում, առաջին համաեվրոպական պատերազմներն ազգայնականության հիմքի վրա, 1848-ի հեղափոխական հրդեհն ամբողջ մայրցամաքով մեկ, դե իսկ շարունակությունն արդեն քաջ հայտնի է: Երկու հարյուր տարում ազգայնականացած և սոցիալիստականացած եվրոպացիների ձեռքով շուրջ երկու հարյուր միլիոն մարդ սպանվեց:

Հայերի համար բավարական սեկտայի գործունեության դառը պտուղներն արտահայտվեցին նրանով, որ եվրոպական մայրաքաղաքներում կրթվող մեր հայրենակիցները գաղափարական բացիլակիր դարձան՝ ժամանակի ընթացքում ձևավորվելով իբրև հնչակ, դաշնակ, ռամկավար, որոնց զինանշանների վրա առայսօր էլ ներկայացված են աստվածաժխտումն ու

Իրենք՝ հրեաները, բնականաբար նոր աղանդի նկատմամբ անտարբեր գտնվեցին, բայց փոխարենը մորմոնի ուսմունքին հետևեցին հազարավոր վերաբնակներ, իսկ ամենակայուղչ՝ հրեաների նկատմամբ անհանդուրժողությունը փոխվեց Նոր աշխարհում նրանց առաքելության ճանաչմամբ: Դրա շնորհիվ, Ամերիկայում 1861–65 թթ. քաղաքացիական պատերազմից հետո, որտեղ զոհվեց 1–1.5 միլիոն հնաբնակ ամերիկացի, Եվրոպայից և Ռուսաստանից կազմակերպվեց մեծաքանակ հրեական ներգաղթ, ինչն էապես փոխեց Միացյալ Նահանգների էթնոռասայական կազմը, առանձնապես՝ արևելյան ափի արդյունաբերական կենտրոններում:

Մորմոնները բազմաթիվ այլ աղանդների նման Հայաստան ներթափանցեցին 1988-ի երկրաշարժից հետո, հումանիտար գործունեության քողի ներքո: Նրանք շահեկանորեն տարբերվում են քրիստոնեամերձ այլ աղանդներից իրենց բարոյական կեցվածքով, կրթական բարձր մակարդակով, աղանդի հաց անդամներին և պարզապես կարիքավորներին անշահախնդիր աջակցությամբ: Անգամ հոգեորսությունը մորմոններն իրականացնում են բացառիկ նրբանկատությամբ: Ակտոր արդեն Հայաստանում կա մի քանի հազար անդամ ունեցող մորմոնական համայնք, մորմոն դասախոսները հաջողությամբ կրթում են ամերիկասեր հայ երիտասարդությանը Հայաստանի ամերիկյան համալսարանում: Իսկ մեծարգո պարոն Ջոշարյանի կողմից Ցուտայում ձեռք բերված հաճախայնություններից հետո մորմոնները կանաչ լույս են ստանում աղետի գոտում ավելի խոր արմատներ գցելու համար: Վերջին տասնամյակներում զանգվածաբար սեկտաբաշված Հայաստանը սպառնում է օտարածին գաղափա-

ական համակարգերի փորձարկման ամբողջական բանջարանոց դառնա: Գործող վարչակարգի ազգանպաստ քաղաքականությունը պարզապես հիացմունք է առաջացնում: Բռավո՛, պարոնայք:

Երբ Քոչարյանի՝ ԱՄՆ այցից առաջ նրա արտաքին քաղաքականության գծով խորհրդական Արամ Սարգսյանին «Ա1+» հեռուստաընկերության «P. S.» հաղորդաշարի ուղիղ եթերում հարց տրվեց Ցուտա նահանգ Քոչարյանի այցելության նպատակների մասին, խորհրդականը զարմացած հայացք ընդունեց և ի լուր բոլորի հայտարարեց, թե երկրի ղեկավարը Ցուտա չի այցելելու: Դա, իհարկե, գործող նախագահի պրոբլեմն է վստահել կամ չվստահել սեփական խորհրդականին, բայց մեզ ավելի շատ հետաքրքրում է, թե տեղյա՞կ էր գործընթացին ՆԳ և ԱԱ նախարարը, և հանրապետության նախագահն անհրաժեշտ տեղեկատվություն ստացե՞լ էր մորմոնների էության մասին: Մեզ հետաքրքրում է նաև, թե տեղյա՞կ է պաշտպանության նախարարը, որ բազմաթիվ հայ երիտասարդներ հավաքագրվում են մորմոնների շարքերում՝ բանակում զինծառայությունից խուսափելու համար, և ամենայն հավանականությամբ մորմոնները կարողանում են պաշտպանել իրենց պրոտեժեներին: Իսկ այժմ, ներթափանցելով բարձրագույն կրթության ոլորտ, նրանք հնարավորություն են ստանում սերունդներ դաստիարակել հայրենիքի պաշտպանությունից խուսափելու ոգով և պարզապես կադրեր պատրաստել Հայաստանում զուտ իրենց շահերի արտահայտման համար: Եվ չզարմանաք, եթե մի քանի տարի հետո Հայաստանի բնակչության մի մասը ղեկավարվի ոչ թե սեփական իշխանությունների, այլ Մայքլ Լևիթի կամ մեկ այլ ղևիի կողմից:

Մի՞թե Հայ Առաքելական եկեղեցու ծեսով կնքված մեր ազգասեր ղեկավարներին հայտնի չէ, որ Կտակարանում ասված է. «Վկայում եմ ես ամէն մէկին, ով լսում է այս գրքի մարգարէութեան խօսքերը. եթէ մէկը բան աւելացնի սրա վրայ, Աստուած նրա վրայ պիտի բարդի այս գրքում գրուած եօթը պատուհասները. և եթէ մէկը բան պակասեցնի այս գրքի մարգարէութեան խօսքերից, Աստուած պիտի պակասեցնի և պիտի կտրի Նրա բաժինը կենաց ծառից և սուրբ քաղաքից՝ ինչպէս որ գրուած է այս գրքում», և այս առումով «Մորմոնի գիրքը» վիրավորանք է և պղծություն՝ քրիստոնեական հավատի ավանդական կերպի: Իսկ եթե այս վարչակարգը որոշել է հանրապետության տնտեսական խնդիրները լուծել տարաբնույթ կրոնական աղանդներին հայ ժողովրդի հատվածական վաճառքի հաշվին, ապա գուցե տիկին Աբգարյանին առաջադրանք տրվի, ասենք, Տավուշը հանձնել Մունի եկեղեցուն՝ նա մորմոններից շատ ավելի հարուստ է և առատաձեռն, իսկ Ջանգեզուր կարելի է հրավիրել վահաբիտներին ու երկրամասի խնդիրները լուծել Սաուդյան Արաբիայի կամ Օմանի Իսլամական բանկի անտոկոս վարկերի հաշվին: Իսկ ինչո՞ւ ոչ, պարոնայք, ազգասիրության քողի տակ ինչ ասես և ինչ ուզես կարող ես անել: Փորձե՛ք, պարոնայք:

Հ. Գ. Ակնհայտ է, որ ՀՀ Նախագահի մամլո ծառայությանը հայերենին տիրապետող խմբագիր է պետք, հակառակ դեպքում նրա հաղորդագրությունները քաոս կառաջացնեն առայսօր ընդունված գրական հայերենում: Ակնհայտ է նաև, որ նույն ծառայությանը պետք է մեկը, որը լավ կպատկերացնի ՀՀ Նախագահի կարգավիճակը և պաշտոնական հաղոր-

դագրություններում տեղ չի գտնի սույն ձևակերպման նման անհեթեթությունը. «այստեղ պարոն Հանդսմանը հյուրընկալել է բազմաթիվ նշանավոր մարդկանց» (ուղղագրության մեջ հավատարիմ ենք մնում բնագրին):

«Օրագիր», 9 հոկտեմբեր, 1998 թ.